ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/57

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Բողոք բերող՝ «Դիսպրո Լայն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Դիսպրո Լայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցում, մասնագիտական ուսուցման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Դիսպրո Լայն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 22.04.2020թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Դիսպրո Լայն» ՍՊԸ-ի հայտը 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 25-րդ, 28-րդ 37-րդ և 40-րդ չափաբաժինների մասով հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 22.04.2020թ.-ին:

23.04.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/57 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

19.05.2020թ.-ին և 22.05.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.05.2020թ.-ին:

2. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Դիսպրո Լայն» ՍՊԸ-ի կողմից 22.04.2020թ.-ին ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ … գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Ընկերությունը 22.04.2020թ.-ի-ին ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Դիսպրո Լայն» ՍՊԸ-ի հայտը 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 25-րդ, 28-րդ 37-րդ և 40-րդ չափաբաժինների մասով հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

«Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող ՀԿ-ի կողմից 22.04.2020թ.-ին ներկայացված բողոքի, «Եղիշե Դերենիկի Հովսեփյան» Ա/Ձ-ի 28.04.2020թ.-ի և «Բիզնես էլիտա» ՍՊԸ-ի 05.05.2020թ.-ի համանման բողոքների հիման վրա, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 14.05.2020թ.-ի կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/43 որոշմամբ պարտավորեցվել է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ մինչև «Դիսպրո Լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի քննության ավարտը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 14.05.2020թ.-ի կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/43 որոշմամբ պարտավորեցվել է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, ուստի, այս պարագայում, վերոնշյալ որոշումը վերանայման ենթակա չի կարող լինել նույն մարմնի կողմից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Դիսպրո Լայն» ՍՊԸ-ի կողմից 22.04.2020թ.-ին ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության, հաշվի առնելով, որ 14.05.2020թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/43 որոշմամբ պարտավորեցվել է «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, որպիսի պայմաններում բողոքի քննությունը դառնում է առարկայազուրկ և անհնար:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դիսպրո Լայն» ՍՊԸ-ի կողմից 22.04.2020թ.-ի-ին ներկայացրած բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**